

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՄՈՒԼՈՒՄ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ

Հետազոտություն

Արթուր Գրիգորյան

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՄՈՒԼՈՒՄ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ

Հետազոտություն

Երևան
2023

Կլիմայական տեկտոնական փոփոխությունների մեր ժամանակաշրջանում լրատվամիջոցներն ունեն առանցքային առաքելություն՝ տրամադրել բնապահպանական խնդիրների վերաբերյալ հավաստի և որակյալ տեղեկություն: Այս նպատակին հասնելու համար կարևոր քայլ է լրագրողների բնապահպանական կրթության ու վերապատրաստման ապահովումը, ինչպես նաև միջազգային մամուլում հրապարակվող մասնագիտական նյութերի թարգմանությունն ու հրապարակումը հայկական մամուլում: Այդ ամենին զուգահեռ լրագրողական շրջանակները պետք է զբաղվեն նաև հայաստանյան մամուլին բնորոշ ընդհանրական խնդիրների կարգավորմամբ, որոնց թվում են լրագրողական էթիկան, անաչառությունը, պատասխանատվությունը:

Հայաստանյան մամուլում բնապահպանական հիմնախնդիրների լուսաբանումը. հետազոտություն/Արթուր Գրիգորյան, էկոլոգիական իրավունքի մասնագետ.- Երևան, 2023 թ.

Սրբագրումը՝ ***Ազնիվ Նասլյանի***

Էջադրումը և ձևավորումը՝ ***Տաթև Եսայանի***

Հետազոտական աշխատանքի համակարգումը՝
Սաթենիկ Բաղդասարյանի, Սվեն Սկորիչի և Դիանա Շահբազյանի

Հետազոտությունը վերանայել է ***Անահիտ Ղարիբյանը***

Լուսանկարները Երևանում շահագործվող հանքավայրերից տրամադրել է ***«Հետք»****-ը: Հեղինակ՝* ***Անի Սարգսյան:***

«Եվրոպական մեդիահարթակ Հայաստանում. հուսալի և պրոֆեսիոնալ լրատվամիջոցների կառուցում» ծրագիրն իրականացվում է Դոյչե Վելլե Ակադեմիայի, «Հետք/Հետաքննող լրագրողներ» ՀԿ-ի, «ԲիԲիՍի Մեդիա Էքշընի»-ի, «Ժողովրդավարության զարգացման հիմնադրամ»-ի և «Factor TV»-ի հետ համատեղ՝ Եվրոպական միության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության տնտեսական համագործակցության և զարգացման (BMZ) նախարարության ֆինանսավորմամբ:

Հետազոտությունը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում նյութի հեղինակը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Դոյչե Վելլե Ակադեմիայի և Եվրոպական միության տեսակետները:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 5

Նպատակ և մեթոդաբանություն 7

Լրագրողական էթիկան և
հայաստանյան լրատվական դաշտին
բնորոշ ընդհանուր խնդիրները 13

Բնապահպանական լրագրություն 19

Բնապահպանության ոլորտն առավել
ակտիվ լուսաբանող լրատվամիջոցները 21

Մարզային լրատվամիջոցներին
բնորոշ հիմնախնդիրները 25

Բնապահպանական հիմնահարցերի թեմատիկ
շրջանակը և առանձնահատկությունները 30

Բնապահպանական հարցերի լուսաբանման
բարելավման գործիքներ 38

Օգտագործված նյութեր և հղումներ 42

Համառոտագրություն 44

Abstract 46

Լուսանկարը՝ Անի Սարգսյանի, «Հետք»

Ներածություն

Բնապահպանական հիմնախնդիրների լուսաբանման հարցում լրատվամիջոցների դերակատարումը չպետք է սահմանափակվի միայն տեղեկություն տրամադրելով. այս առումով մամուլն ունի նաև կրթական նշանակություն: Չնայած կլիմայական փոփոխությունների[1] նկատմամբ Հայաստանի լեռնային էկոհամակարգերի խոցելիությանը և առհասարակ բնապահպանական խորքային և հրատապ լուծում պահանջող խնդիրներին՝ Հայաստանում բնապահպանական թեման չի դասվում մամուլի առաջնահերթությունների շարքում: Սա են վկայում նաև Հայաստանի համացանցային մամուլի վերաբերյալ այլ հետազոտությունները[2], որոնցով ներկայացվել է լրատվական կայքերում բաժինների և թեմաների հետևյալ բաշխվածությունը՝ տնտեսություն, քաղաքականություն, հասարակություն, մշակույթ և սպորտ: Բնապահպանական խնդիրները, որպես կանոն, ներկայացված են հասարակական կամ տնտեսական հարցերը լուսաբանող բաժիններում:

Խոցելիությամբ և բնապահպանական խնդիրներով հանդերձ՝ Հայաստանն իր տեղադիրքի և ռելիեֆի առանձնահատկությունների շնորհիվ ունի բացառիկ հարուստ կենսաբազմազանություն[3]: Բնության համաշխարհային հիմնադրամի հրապարակած տվյալներով[4]՝ մեր երկիրը զբաղեցնում է Կովկասի էկոտարածաշրջանի շատ փոքր մասը, սակայն Հայաստանում աճում է այդ նույն էկոտարածաշրջանի բարձրակարգ բուսական բազմազանության տեսակների կեսից ավելին: Այս հարուստ բնությամբ հանդերձ՝ Հայաստանը նաև չափազանց խոցելի է կլիմայի փոփոխության նկատմամբ,

---

1 ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալներով՝ 1.5-2.0 °C-ով տարեկան ջերմաստիճանի բարձրացումը և տարեկան 10 %-ով տեղումների նվազումը հանգեցնում են էկոհամակարգերում մի շարք բացասական փոփոխությունների: Տե՛ս «Հայաստան. Կլիմայի փոփոխության վիճակագրության զարգացման ճանապարհային քարտեզ», Եր., 2020 թ., https://armstat.am/file/doc/99518218.pdf:

2 Արմեն Ավետիսյան, Համացանցային լրատվական կայքերի ձևավորումը Հայաստանում, «Ժուռնալիստիկա և հաղորդակցություն», Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2018 թ., http://ysu.am/files/A_Avetisyan_51-60.pdf:

3 Բարձրակարգ բույսերի խտությամբ Հայաստանը աշխարհում գրավում է առաջնակարգ տեղերից մեկը՝ յուրաքանչյուր 1000 քառ. կմ–ին՝ մոտ 107 տեսակ: «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիա. ՀՀ հինգերորդ ազգային զեկույց, http://env.am/storage/files/pdfresizercom-pdf-resize.pdf:

4 «Ներդրումներ Հայաստանի պահպանվող տարածքների ոլորտում» գիրքը հասանելի է այստեղ՝ http://env.am/storage/files/pdfresizercom-pdf-resize.pdf:

իսկ բնական պաշարների վատ կառավարման հետևանքով էապես վատթարացել է շրջակա միջավայրի վիճակը. հանքարդյունաբերական թափոններով գետերի աղտոտումը, տարերային անտառահատումները, ջրային աղբյուրների անխնա օգտագործումը մարդկանց ավելի խոցելի են դարձնում կլիմայական բացասական հետևանքների նկատմամբ: Բավարար է ասել, որ ունենալով հարուստ ջրային պաշարներ՝ Հայաստանը դասակարգվել է որպես բարձր ջրային սթրես ունեցող երկիր՝ 150 երկրների շարքում զբաղեցնելով 34-րդ տեղը[5]:

Այս հիմնախնդիրների խորքային ուսումնասիրությունը և պատշաճ մասնագիտական որակով մատուցումը մամուլի համար լուրջ քննություն են, քանի որ պահանջում են բնապահպանական հիմնախնդիրների վերաբերյալ որոշակի գիտելիքներ: Միևնույն ժամանակ, հաշվի առնելով կլիմայի փոփոխությամբ պայմանավորված բնական աղետների, սակավաջրության և այլ խնդիրների անխուսափելիությունը, շատ կարևոր է մարդկանց զինել սպասվող դժվարություններին դիմակայելու համար անհրաժեշտ գիտելիքներով և տեղեկություններով: Այս հարցում մամուլի դերն անառարկելի է: Լրատվական դաշտին բնորոշ ընդհանրական խնդիրները մտքում ունենալով՝ անհրաժեշտ է մշակել մամուլի մասնագիտական որակների և արդյունավետության բարձրացմանը միտված այնպիսի գործիքակազմ, որը ոչ միայն կարող է նպաստել բնապահպանական հիմնախնդիրների լուսաբանմանը, այլև հանգեցնել Հայաստանի մամուլին բնորոշ ընդհանուր խնդիրների կարգավորման:

5 Համաշխարհային ռեսուրսների ինստիտուտի գնահատումը հասանելի է այստեղ (2019)՝ https://ceoworld.biz/2019/08/08/most-water-stressed-countries-in-the-world-for-2019/:

Նպատակ և մեթոդաբանություն

Հետազոտությունը նպատակ ունի գնահատելու բնապահպանական, կլիմայական և համանման խնդիրների լուսաբանման հարցում հայաստանյան լրատվամիջոցների ներգրավվածությունը, հրապարակումների բնույթն ու մասնագիտական հիմնավորվածությունը:

Ընդհանուր նյութի շրջանակում ոչ միայն ներկայացվում են Հայաստանի մամուլին բնորոշ ընդհանուր խնդիրները, այլև հասցեական կերպով մատնանշվում են կոնկրետ բնապահպանական հիմնախնդիրների լուսաբանման հարցում առավել ցայտուն առանձնահատկությունները: Ներկայացվում են նաև որոշ քանակական և բովանդակային տվյալներ բնապահպանական թեմաները լուսաբանող լրատվամիջոցների և նրանց հրապարակումների բնույթի վերաբերյալ (օրինակ՝ զուտ լուրի տրամադրում, վերլուծական և հետաքննական հոդվածներ և այլն):

Հետազոտությունն իրականացնելիս օգտագործվել են տեղեկությունների հավաքման առաջնային և երկրորդային աղբյուրներ: Երկրորդային աղբյուրներ են դիտվել մամուլի հաղորդագրությունները, հրապարակումները, տեղական և միջազգային կազմակերպությունների ուսումնասիրություններն ու զեկույցները, ինչպես նաև պաշտոնական վիճակագրական տվյալներ և կանոնագրեր: Այնուհետև ստացված տեղեկությունները ստուգվել են բնապահպանության ոլորտում զգալի փորձառություն ունեցող լրագրողների շրջանում հարցազրույցների միջոցով: Հարցազրույցների նպատակն է հենց լրագրողներից ճշգրտել.

- ➡ Բնապահպանական ո՞ր հիմնախնդիրներն են առավել շատ լուսաբանվում:
- ➡ Արդյո՞ք կլիմայական հարցերը կարևորվում են:
- ➡ Ո՞ր լրատվամիջոցներն են ավելի շատ ներկայացնում բնապահպանական հիմնախնդիրները, և հիմնականում ի՞նչ բնույթի են այդ հրապարակումները՝ զուտ լրատվակա՞ն, թե՞ նաև մասնագիտական-վերլուծական:

Ոլորտի լուսաբանման գործընթացում ակտիվորեն ներգրավված լրագրողների հետ հարցազրույցների միջոցով ուսումնասիրության է ենթարկվել պետական մարմինների կողմից որոշումների ընդունման վրա լրատվամիջոցների ազդեցության հարցը:

Հարցազրույցներին մասնակցած լրագրողներն են՝

Քրիստինե Աղալարյան

«Հետք». հետաքննող լրագրող

Մկրտիչ Կարապետյան

«Սիվիլնեթ» և այլ լրատվամիջոցներ

Մարի Չաքրյան

«Ալիք Մեդիա», Օրհուսի կոնվենցիայի Հայաստանի ազգային համակարգող

Թեհմինե Ենոքյան

«Կանաչ Հայաստան» ՀԿ. ղեկավար, բնապահպան, լրագրող

Առանձին ուսումնասիրվել են այն ոլորտային քաղաքականությունները, որոնք էականորեն փոխկապակցված են բնապահպանական ոլորտի հետ (հանքարդյունաբերություն[6], Արարատյան արտեզյան ավազան[7], կլիմայի փոփոխության մեղմացման և ադապտացման[8] հարցեր և այլն)։ Նույն կերպ՝ առանձին ուսումնասիրության առարկա է եղել Դոյչե Վելլե Ակադեմիայի ծրագրի մաս կազմող լրատվամիջոցների, այդ թվում՝ մարզային մեդիա գործընկերների լուսաբանման ցանկում բնապահպանական նյութերի առկայությունը, ինչպես նաև ուսումնասիրված նյութերի քանակը և մասնագիտական-վերլուծական բովանդակությունը։ Մյուս կողմից՝ ուսումնասիրության

6 «Հանքարդյունաբերության ոլորտի կայունության ռազմավարական գնահատում. Հայաստան/Համաշխարհային բանկ». «Սվիդիշ Ջիոլոջիքըլ Էյ-Բի», «Էս-Էլ Ար Քոնսալթընսի», «Ավագ Սոլյուշընս» ընկերություններ, ՀԱՀ պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոն, ՀԱՀ Թուրփանջյանի անվան քաղաքականության վերլուծության կենտրոն, ապրիլ, 2016, https://www.eiti.am/file_manager/Useful%20materials/StrategicArm.pdf:

7 «Գիտական առաջադեմ տեխնոլոգիաների օգտագործում և համագործակցություն հանուն ռեսուրսների համալիր պահպանության» ծրագիր, ԱՄՆ ՄԶԾ, http://www.aspired.wadi-mea.com/hy/%d5%ae%d6%80%d5%a1%d5%a3%d6%80%d5%ab-aspired/:

8 Կլիմայի փոփոխության տեղեկատվական կենտրոն, https://www.nature-ic.am/:

հիմնավորվածությունն ապահովելու նպատակով օգտագործվել են Դոյչե Վելլե Ակադեմիայի կողմից Հայաստանում Վիդեո մետրիկայի ուսումնասիրության նախնական արդյունքները: Վիդեո մետրիկական հետազոտությունը նույնպես անցկացվել է ծրագրի մաս կազմող լրատվամիջոցների լսարանների շրջանում:

Ոլորտի լուսաբանման գործընթացում ակտիվորեն ներգրավված լրագրողների հետ հարցազրույցների միջոցով ուսումնասիրության է ենթարկվել պետական մարմինների կողմից որոշումների ընդունման վրա լրատվամիջոցների ազդեցության հարցը: Ուսումնասիրվել են նաև «Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե» հասարակական կազմակերպության մշտադիտարկման արդյունքներն ու այլ հրապարակումները մարզային ԶԼՄ-ների վիճակի, խնդիրների, ակնկալիքների վերաբերյալ, ինչը թույլ է տալիս գնահատել ժամանակի ընթացքում մարզային լրատվամիջոցներում բարեփոխումների ընդհանուր դինամիկան:

Մեթոդներ

Այս հետազոտությունն իրականացվել է խառը մեթոդների կիրառմամբ: Դրանք են՝

- Փաստաթղթերի վերլուծություն, որի շրջանակում կատարվել են.
  - ա) հրապարակումների բովանդակային ուսումնասիրություն,
  - բ) լրատվամիջոցների կայքերի ուսումնասիրություն, որոնք առավել շատ են լուսաբանում բնապահպանական հիմնախնդիրները:
- Մարզային լրատվամիջոցների կայքէջերում բնապահպանական խնդիրների լուսաբանման քանակական և բովանդակային վերլուծություն:
- Խորին հարցազրույցներ բնապահպանական խնդիրներն առավել ակտիվ լուսաբանող լրագրողների շրջանում:
- Հանդիպում-քննարկումներ լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ:

Այս հետազոտության ընթացքում ուսումնասիրված մարզային լրատվամիջոցներն ու հասարակական կազմակերպությունները հետևյալն են՝

— **«Ցայգ» հեռուստաընկերություն**

https://tsayg.am/

— **ԱԼՏ հեռուստաընկերություն**

https://alttv.am/

— **«Ասպարեզ» լրագրողների ակումբ**

https://asparez.am/

— **«Համայնքների համախմբման և աջակցման կենտրոն» ՀԿ**

http://www.armccms.org/

— **«Գեղամա» Գեղարքունիքի մարզային հեռուստաընկերություն**

https://www.facebook.com/GEGHAMATV/

— **«Քյավառ» հեռուստաընկերություն**

http://www.kyavartv.am/

— **«Տավուշ մեդիա»**

https://tavushmedia.am/hy/

— **«Լոռի» հեռուստաընկերություն**

https://loritv.am/

— **«Գորիսի մամուլի ակումբ»**

https://mediapoint.am/

— **«Գյումրու առաջընթաց» ՀԿ**

https://progressgyumri.am/

Հետազոտությամբ ուսումնասիրվել են վերջին երկու տարվա ընթացքում լուսաբանված նյութերը: Առավել վաղ շրջանում արված հրապարակումները դիտարկվել են միայն այն պարագայում, եթե իրականացվել է ինտենսիվ լուսաբանում՝ գնահատելու համար ոլորտի ոչ կայուն լուսաբանման պատճառները (դրամաշնորհային ծրագիր, մասնագիտացված լրագրողների տեղափոխություններ և այլն): Ուսումնասիրության նպատակին հասնելու համար առաջադրվել են հետազոտական հետևյալ խնդիրները (բնապահպանական խնդիրների լուսաբանմանն առնչվող հարցերի թեմատիկ շրջանակը):

Այս առումով ուսումնասիրության շրջանակում կարևոր է բացահայտել.

➡ Մամուլում համեմատաբար առավել շատ լուսաբանվող բնապահպանական հիմնախնդիրները:

- Բնապահպանական հիմնախնդիրների ցանկում կլիմայական հարցերի տեղը:
- Լուսաբանվող նյութերի բնույթը՝ զուտ լրատվական կամ մասնագիտական-վերլուծական:
- Լրատվամիջոցների շրջանակը, որոնց լրատվացանկում բնապահպանական հիմնախնդիրներն ունեն ծանրակշիռ ներկայացվածություն:

Նշված հարցադրումների պատասխանները կարող են որոշակիորեն ամբողջական պատկեր ստեղծել ներկայիս հայաստանյան մամուլում բնապահպանական առաջնահերթություններն ուրվագծելու, լուսաբանման խորությունը և հրապարակումների ամբողջականությունը գնահատելու համար:

Հաշվի առնելով հետազոտության բավականին լայն շրջանակը՝ արդյունքներն առավել հանրամատչելի դարձնելու համար դրանք ներկայացվելու են մի քանի հոդվածների մշակման և հրապարակման միջոցով: Հետևապես, սույն հետազոտության վերջնարդյունքի մաս է հոդվածաշարի հրապարակումը (2 հոդված), որը թեմատիկ կերպով ներկայացնելու է կոնկրետ բնապահպանական հիմնախնդիրների լուսաբանման գործընթացում առկա խնդիրների ընդհանուր բնութագիրը, այս առումով առավել ակտիվ լրատվամիջոցների ցանկը, ինչպես նաև հրապարակված նյութի բնույթն ու թեմատիկ շրջանակը:

Հետազոտության ավարտին գործունեության և արդյունքների վերաբերյալ ընդհանուր հաշվետվությամբ ներկայացվելու են անհրաժեշտ առաջարկություններ, թե ինչ գործիքներ կարող են կիրառվել՝ բարձրացնելու համար լրատվամիջոցների աշխատանքի արդյունավետությունը բնապահպանական հիմնախնդիրների ազդեցիկ և հասցեական լուսաբանման համար:

Այսուհանդերձ, հետազոտության արդյունքները չեն հավակնում տալու համապարփակ գնահատական հայաստանյան լրատվամիջոցների կողմից բնապահպանական հիմնահարցերի լուսաբանման որակի, մասնագիտական հիմնավորվածության կամ պետական մարմինների կողմից որոշումների ընդունման հարցում վերջիններիս դերակատարման վերաբերյալ: Հետազոտությունը չի ընդգրկում նաև այն բոլոր հարցերը, որոնք ոլորտի մասնագիտական խմբերի կամ շահագրգիռ հանրության շրջանում կարող են ծագել բնապահպանական հիմնախնդիրների լուսաբանման քանակական և թեմատիկ ցուցանիշների առնչությամբ:

Լուսանկարը՝ Անի Սարգսյանի, «Հետք»

Լրագրողական էթիկան և հայաստանյան լրատվական դաշտին բնորոշ ընդհանուր խնդիրները

Ներպետական և միջազգային իրավական ակտերով երաշխավորված է լրագրողի իրավունքը՝ տարածելու անսահմանափակ թվով անձանց համար հասանելի տեղեկություններ: Լրատվամիջոցների և լրագրողների գործունեությանն առնչվող հարցերը կարգավորված են «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքով[9], որի համաձայն՝ զանգվածային լրատվության հիմնական նպատակն է ապահովել մարդու սահմանադրական իրավունքը՝ ազատորեն, անկախ պետական սահմաններից, փնտրելու, ստանալու և տարածելու տեղեկություններ ու գաղափարներ: Ավելին, համաձայն նշված օրենքի 4-րդ հոդվածի, «Լրագրողն իր մասնագիտական օրինական գործունեության ընթացքում, որպես հասարակական պարտք կատարող անձ, պաշտպանվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ»: Ըստ էության՝ կարելի է ասել, որ լրատվամիջոցները Հայաստանում ունեն բավականին լայն դիտողականություն:

Պրոֆեսիոնալ լրագրողական գործունեության կարևոր բաղադրիչներից է լրագրողական էթիկան, որի առկայությունը կամ բացակայությունը ևս մեկ ցուցիչ է որևէ երկրի մեդիադաշտը գնահատելու համար:

Հայաստանում կան բազմաթիվ լրատվամիջոցներ, որոնք էթիկական կանոնագրերը համարում են խոսքի ազատության լրացուցիչ սահմանափակում, և այդ ԶԼՄ-ների գործունեությանը հետևելիս կարելի է նկատել, որ դրանցում առկա են զրպարտություն, ատելության խոսք և ապատեղեկատվություն[10]:

Այդուհանդերձ, կա բավականին լայն շրջանակի մասնագիտական գրականություն լրագրողական էթիկայի տարբեր դրսևորումների վերաբերյալ, ինչպիսիք են մատուցվող տեղեկության բավարար ճշգրտությունը, հավասարակշռված լուսաբանումը, քաղաքական և պրոպագանդիստական նպատակներ չհետապնդելը, խտրակա-

9 «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքը, https://www.arlis.am/documentview.aspx?docid=1379:

10 Տե՛ս «Մեդիա հանդուրժողականության ինդեքսը իրավապաշտպանների և ակտիվիստների հանդեպ», «Սոցիոսկոպ» ՀԿ, Եր., 2015 թ., https://socioscope.am/wp-content/uploads/2016/02/Tolerance-Index_Report_21.02.16_final.pdf:

նության և ատելության խոսքի բացառումը և բարեխիղճ լուսաբանման համար անհրաժեշտ էթիկական այլ ստանդարտներ:

Այս առումով ոլորտի փորձագետները, կարևորելով խնդիրը, տարբեր տարիների հրապարակել և ուսումնասիրել են միջազգային փորձի և էթիկական կանոնագրերի կիրառության լավ օրինակներ[11]:

Ոլորտի պատասխանատուների կողմից կան մշակված թե՛ ստանդարտներ, թե՛ էթիկայի կանոնագրերի օրինակելի ձևեր, ինչպես, օրինակ՝ Գերմանիայի մեդիակոդեքսը[12] (թարգմանված «Լրագրողներ հանուն ապագայի» ՀԿ-ի կողմից): Վերջին տարիներին, առցանց ԶԼՄ-ների թվի կտրուկ աճով պայմանավորված, մշակվել է նաև «Լավագույնը ցանցում. առցանց լրագրողի ուղեցույցը»[13], կան հիմնախնդրին նվիրված բազմաթիվ այլ հրապարակումներ և հոդվածներ:

Լրագրողական գործունեության որոշակի մասնավոր հարաբերություններ կարգավորված են նաև միջազգային մակարդակում, որոնք թեև վերաբերում են, օրինակ, ոստիկանության հետ հարաբերություններին կամ կոնֆլիկտային գոտիներում լուսաբանման նրբություններին, սակայն միանշանակորեն կիրառելի են նաև ամենօրյա աշխատանքում: Հանրային տեղեկության տրամադրման հարաբերությունները կանոնակարգող կարևոր միջազգային խորհրդատվական փաստաթղթերից մեկը ոստիկանության և մեդիայի հարաբերությունների վերաբերյալ Վառնայի ուղեցույցն[14] է: Ըստ այդմ՝ բոլոր լրագրողներն ու զանգվածային լրատվամիջոցները պետք է հետևեն լրատվամիջոցների վարքագծի և էթիկայի կանոններին: Այդ չափանիշները մշակվում և ընդունվում են լրագրողների կողմից ինքնակարգավորման սկզբունքի հիման վրա՝ առանձին լրատվամիջոցների կամ դրանց միավորումների մակարդակով: Կա ևս մեկ բացարձակ ճանաչում ստացած կանոն, որի համաձայն՝ անթույլատրելի է լրագրողի էթիկայի կանոնների սահմանումն օրենքով: Այդպիսի իրավական կանոնակարգման և պետական վերահսկողության մեխանիզմ սահմանելու դեպքում սահմանափակվում է լրագրողի ազատությունը, և նա աստիճանաբար «վերափոխվում» է հանրային ծառայողի:

---

11 «Լրագրողական էթիկա. օրինակներ և մեկնաբանություններ», խմբ.՝ Նարինե Սաֆարյան, «Ինտերնյուս» մամուլի աջակցության ՀԿ, Ե., 2012:

12 Գերմանական մամուլի կոդեքս, https://issuu.com/jffarmenia/docs/german_press_code:

13 «Լավագույնը ցանցում, առցանց լրագրողի ուղեցույց», խմբ.՝ Սուրեն Դեհերյան, Եր., 2013, https://www.osce.org/files/f/documents/2/b/109869.pdf:

14 Վառնայի ուղեցույցը հասանելի է այստեղ՝ http://www.aip-bg.org/documents/varna.htm:

Որքան էլ լրագրողական գործունեությունը պաշտպանված և երաշխավորված լինի, այնուհանդերձ, լրատվության և լրագրողական գործունեության համար ևս կան որոշակի արգելքներ և սահմանափակումներ: Այս հիմնահարցին անդրադարձ է արվել Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի և խորհրդարանական վեհաժողովի բազմաթիվ բանաձևերով և խորհրդատվական առաջարկություններով[15]: Նշված փաստաթղթերով սահմանվել են որոշակի սկզբունք-ուղենիշներ, որոնք վերաբերում են թե՛ հանրային իշխանության մարմինների պարտավորություններին՝ կապված հանրությանը տեղեկություն տրամադրելու հետ, և թե՛ ԶԼՄ-ների գործունեության սկզբունք-չափանիշներին:

Սահմանված սկզբունքները, ի թիվս այլոց, ներառում են «Լրագրողների՝ հանրային իշխանության մարմինների տրամադրության տակ եղած տեղեկությունը ստանալու հնարավորություն՝ հավասարության և անկողմնակալության հիման վրա՝ առաջնորդվելով տեղեկատվության մատչելիության քաղաքականությամբ»: Նույն երաշխավորության 8-րդ սկզբունքի համաձայն՝ «...հանրային իշխանությունները պետք է զսպվածություն դրսևորեն լրատվության միջոցների գործունեության վերաբերյալ իրենց նկատառումները արտահայտելիս և հաշվի առնեն, որ լրագրողական գործունեությունը լրագրողներին իրավունք է վերապահում առաջնորդվելու ինքնակարգավորվող չափորոշիչներով...»: Դրանցով նախատեսվել են լրատվության միջոցների մասնագիտական վարքագծի որոշակի օրինակելի չափորոշիչներ՝ լրագրողական էթիկայի որոշակի նվազագույն չափանիշներ նախատեսող սկզբունքներ: Դրանք են՝

1. *հարգել հանրության՝ ճշգրիտ տեղեկություն ստանալու իրավունքը,*
2. *տեղեկությունը ձեռք բերել արդար միջոցներով,*
3. *ներկայացնել ճշմարտացի տեղեկություններ, արդարացված մեկնաբանություններ և քննադատություն՝ խուսափելով անձանց մասնավոր կյանքին անհարկի միջամտությունից, զրպարտությունից և անհիմն մեղադրանքներից,*
4. *շտկել ցանկացած տպագիր կամ հեռարձակված տեղեկություն, որի կոպտորեն թյուր լինելը հաստատվել է հետագայում,*

15 Կոնֆլիկտային իրավիճակներում խոսքի ազատության՝ Եվրոպայի խորհրդի սահմանած բանաձևը հասանելի է այստեղ՝ https://www.coe.int/en/web/freedom-expression/freedom-of-expression-in-times-of-conflict

5. *պահպանել մասնագիտական անվտանգությունը՝ հաշվի առնելով տեղեկատվության աղբյուրը,*
6. *խուսափել ցանկացած բռնություն, ատելություն, անհանդուրժողականություն կամ խտրականություն խթանելուց, մասնավորապես, հիմնված ռասայի, սեռի, սեռական կողմնորոշման, լեզվի, դավանանքի, քաղաքական կամ այլ հայացքների, ազգային կամ կրոնական պատկանելության, սոցիալական կարգավիճակի վրա:*

Վերը նշված վարքագծային կանոնները հաշվի առնելով՝ նախքան բնապահպանական հիմնախնդիրների լուսաբանման հարցերին անդրադառնալը հարկ է նշել, որ հայկական մեդիադաշտում առկա բոլոր ընդհանուր խնդիրները[16] դրսևորվում են նաև բնապահպանության ոլորտը լուսաբանելիս, մասնավորապես՝ մոլորեցնող և ակնհայտորեն միակողմանի տեղեկության տարածումը, լուսաբանվող ոլորտի վերաբերյալ խորքային գիտելիքի բացակայությունը, մատուցվող նյութի պարզունակությունը, փաստական հանգամանքներն ընդհանուր համատեքստից կտրված՝ մանիպուլյատիվ կերպով մատուցելը և լայնորեն տարածված բացասական այլ երևույթներ: Բնապահպանական հարցերի լուսաբանման հիմնական դրսևորումներից է նաև բևեռացված տեղեկության տրամադրումը՝ նույն հարցի վերաբերյալ միմյանցից ծայրահեղ տարբերվող կարծիքներով, ինչը հիմնավոր կասկածներ է առաջացնում դրանցից առնվազն մեկի պատվիրված կամ առնվազն ոչ անաչառ լուսաբանված լինելու մասին:

Հարկ է նշել նաև, որ հայաստանյան մամուլի ներկայացուցիչները ջանքեր են գործադրում լրագրողների վարքագծի կանոններ մշակելու և ինչ-որ կերպ դրանք վերահսկելու ուղղությամբ: Մասնավորապես, «Երևանի մամուլի ակումբի» շրջանակում ընդունվել է «Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագիրը»[17], որը տարածվում է միայն այն ստորագրած լրատվամիջոցների համար, որոնք ընդունել են ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի իրավասությունը՝ քննելու իրենց գործողությունների և հրապարակումների համապատասխանությունը

16 Տե՛ս «Խտրականությունն ու բռնությունը հեռուստաեթերում և լրատվական կայքերում. որքանով է գենդերային զգայուն հայաստանյան մեդիան. մշտադիտարկման արդյունքների ամփոփում», 2019 թ., էջ 54, https://oxygen.org.am/wp-content/uploads/2021/02/Media-Monitoring-Report_Final.pdf:

17 Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագիր, https://ypc.am/wp-content/uploads/2014/06/Code-of-Ethics_arm.pdf:

կանոնագրի դրույթներին: Ներկա դրությամբ Կանոնագիրը ստորագրել են 69 լրատվամիջոց և 8 լրագրողական կազմակերպություն[18]: Այնուհանդերձ, նշված ցանկում բացակայում է Հայաստանի լրատվական դաշտում ազդեցիկ լրատվամիջոցների շատ մեծ հատվածը, ուստի չի կարելի պնդել, որ այս նախաձեռնությունը լրատվական դաշտի էթիկական ինքնակարգավորման լիարժեք գործիք է: Ներկայում դեռևս ջանքեր են գործադրվում ԶԼՄ-ների ինքնակարգավորման համակարգի[19] կանոնակարգման ուղղությամբ:

Չնայած ինքնակարգավորման ճանապարհով լրատվամիջոցների գործունեության բարելավմանն ուղղված ջանքերին՝ կարծում եմ, անհրաժեշտ է առավել ինստիտուցիոնալ մոտեցումներ գտնել լրագրողական էթիկայի կանոնների մշակման և ամենակարևորը՝ դրանց փաստացի ապահովումը գործուն մեխանիզմներով երաշխավորելու համար:

Առաջարկություն 1

Լրագրողների ինքնակազմակերպման որևէ կառույցի շրջանակում մշակել Հայաստանում գործող բոլոր լրատվամիջոցների և լրագրողների համար համընդհանուր ճանաչում ունեցող էթիկական նորմեր, որոնց պետք է հետևեն հայաստանյան մեդիայում գործող բոլոր լրատվամիջոցները և լրագրողները:

Առաջարկություն 2

Լրագրողական էթիկայի և պրոֆեսիոնալ ժուռնալիզմի թեմայով կազմակերպել միջազգային համաժողով՝ հրավիրելով աշխարհում հեղինակավոր լրատվամիջոցների և լրագրողական միությունների ներկայացուցիչների:

18 Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագիրը ստորագրած ԶԼՄ-ների ցանկ, https://ypc.am/wp-content/uploads/2021/12/List-of-Members-as-of-as-of-June-2021_arm.pdf:

19 «Զանգվածային լրատվության միջոցների ինքնակարգավորման համակարգի ինստիտուցիոնալ կայացումը». նախագիծ, https://ypc.am/wp-content/uploads/2022/07/Draft-Concept_2022_arm.pdf:

Լուսանկարը՝ Անի Սարգսյանի. «Հետք»

©

Բնապահպանական լրագրություն

Բնապահպանական հիմնախնդիրների լուսաբանման հարցում կան նաև բացասական այլ առանձնահատկություններ, որոնցից են՝

- բնապահպանական հարցերով հոդվածների չափազանց փոքր թիվը,
- բնապահպանության ենթաբաժին ունեցող կամ բնապահպանական հարցերը պարբերաբար լուսաբանող լրատվամիջոցների սահմանափակ լինելը,
- հրապարակված հոդվածներում բուն բնապահպանական հարցերի վերլուծության սակավությունը,
- մասնագիտական/փորձագիտական նյութերի ծայրահեղ անբավարարությունը,
- նյութերում հաճախ դիտարկվող՝ փաստարկման բազայի բացակայությունը,
- լուսաբանվող նյութերում սխալ կամ ոչ պրոֆեսիոնալ տերմինաբանության օգտագործումը։

Քիչ թիվ են կազմում նաև մեդիաները, որոնք իրենց կազմակերպության կանոնադրական նպատակներում առանձնացնում են բնապահպանական հարցերը՝ որպես հանրային նշանակության խնդիր, որը պետք է լուսաբանվի[20]։

Թվարկված թերությունները ոչ միայն էականորեն նվազեցնում են լուսաբանվող նյութերի գրավչությունը և վստահելիությունը, այլ նաև ստեղծում են բնապահպանական օրակարգի անկարևոր լինելու մասին ոչ համարժեք տպավորություն։ Հանրային ընկալման տեսանկյունից հատկապես խնդրահարույց է կլիմայական մարտահրավերների վերաբերյալ լիարժեք և փաստարկված նյութերի բացակայությունը։ Կլիմայի փոփոխության հետևանքների՝ պետական մարմինների կողմից մշակվող հարմարվողականության և մեղմացման միջոցառումների մասին տեղեկությունը ներկայացված է գրեթե ամբողջությամբ պետական մարմինների պաշտոնական կայքերում, այն էլ ոչ թե մատչելի գրված հոդվածների, ուղեցույցների կամ գրքույկների, այլ համապատասխան միջազգային կառույցներին ներկայացվող ֆորմալ հաշվետվությունների տեսքով, որոնք

20 «Մեդիա նախաձեռնությունների կենտրոն» հասարակական կազմակերպության կանոնադրություն, 2.1.8 դրույթ, https://mediainitiatives.am/wp-content/uploads/2019/01/Media-Initiatives-Center-Charter-Arm.pdf:

անհրաժեշտ է մատչելի մեկնաբանել։

Թեմատիկ առումով սահմանափակ է լուսաբանվող բնապահպանական հիմնախնդիրների բազմազանությունը։ Բացառությամբ մի քանի լրատվական կայքերի, որոնց գործունեությունը կենտրոնացած է հենց բնապահպանական հիմնախնդիրների լուսաբանման ուղղությամբ, լրատվամիջոցների մեծամասնությունը դրանց անդրադառնում է կոնկրետ հարցի հանրային հնչեղություն ունենալու պարագայում, ոչ թե ընթացիկ պարբերականությամբ։ Այս խնդիրն են շեշտադրում նաև հարցազրույցներին մասնակցած լրագրողները։

Բացի այդ՝ Դոյչե Վելլե Ակադեմիայի կողմից իրականացվող լսարանի հետազոտության նախնական արդյունքներով՝ մինչ օրս տարբեր մարզերում անցկացված 15 ֆոկուսխմբային քննարկումներից միայն 3-ում են մասնակիցները նշել, որ հետաքրքրված են բնապահպանական թեմաներով և խնդիրների լուսաբանմամբ։ Ընդհանուր առմամբ 15 ֆոկուսխմբային քննարկումներից 9-ում քննարկվող տեսանյութերն ամբողջությամբ կամ մասամբ նվիրված են եղել բնապահպանական խնդիրների։ Այդ տեսանյութերի քննարկումներում լսարանը տեսանյութի թեման մշտապես համարել է արդիական և կարևոր։ Սա այն բանի հավաստումն է, որ լսարանի կողմից կա բնապահպանական հիմնախնդիրների լուսաբանման պահանջարկ։ Մյուս կողմից՝ լսարանի հետազոտության մասնակիցները նման տեսանյութերի քննարկման ընթացքում ավելի խստապահանջ են ներկայացվող խնդիրների փաստահենքության, մեդիայի կողմից օգտագործվող տերմինաբանության պարզեցման և նույնիսկ գիտական-մասնագիտական լայն հանրույթի կողմից խնդիրների պատշաճ ներկայացված ու քննարկված լինելու անհրաժեշտության հարցերում։

Կա նաև տեսակետ, որ բնապահպանական ոլորտի լուսաբանման ընթացքում կեղծ լուրեր քիչ են տարածվում, ինչը բացատրվում է ոչ միայն նյութերի սակավությամբ, այլև այս թեմայով հետաքրքրված լսարանի փոքր լինելով ու նրանց ոչ բավարար մեդիագրագիտությամբ։ Կեղծ լուրերի տարածման հավանականությունը ցածր է նաև այն պատճառով, որ այս խմբի մեդիասպառողների շրջանում այն մարդիկ են, որոնց խորապես հետաքրքրում են բնապահպանական խնդիրները (կա՛մ բնապահպաններ են, կա՛մ գիտական աշխատողներ, կա՛մ մարդիկ, որոնք ապատեղեկատվություն չեն տարածում)[21]։

Այսինքն՝ մամուլում կան նաև քիչ քանակությամբ հավասարա-

21 «Մեդիա աշխատողների կարիքները տեղեկություններ ստուգելիս և ապատեղեկատվության հետ աշխատելիս», 2022 թ., էջ 16, https://pjc.am/wp-content/uploads/2022/09/Media_Workers_Need_Assessment_PJC.pdf:

կշռված և փաստարկված հոդվածներ, մուլտիմեդիա հրապարակումներ, խորքային հետաքննական նյութեր, որոնց մասին նույնպես կխոսվի հաջորդիվ։

Բնապահպանության ոլորտն առավել ակտիվ լուսաբանող լրատվամիջոցները

Բավականին փոքր է այն լրատվամիջոցների ցանկը, որոնք իրենց կայքում ունեն «Բնապահպանություն» վերտառությամբ առանձին ենթաբաժին (օրինակ՝ «Հետք»-ը)։ Համեմատաբար նոր հիմնադրվածներից է «Քաղաքացու ձայնը» լրատվամիջոցը, որի կայքում նույնպես առանձնացված է բնապահպանության ենթաբաժին, և բավականին կենտրոնացած է բնապահպանական և դրա հետ փոխկապակցված սոցիալական հիմնախնդիրների լուսաբանման վրա։ Այնուհանդերձ, նշված լրատվամիջոցը դեռևս չունի նյութերի բազմազան և մեծաքանակ բազա, ինչպես նաև լայն լսարան, թեպետ որպես մարզային մեդիա լայն ճանաչում ունի տեղացիների շրջանում հիմնականում դրսևորվող հասարակական ակտիվության շնորհիվ։

Որոշ լրատվամիջոցներ էլ, թեև չունեն «Բնապահպանություն» վերտառությամբ բաժին, սակայն առավել ակտիվ ներգրավվածություն ունեն բնապահպանական հիմնախնդիրների լուսաբանման հարցում։ Դրանցից են «Ազատություն» ռադիոկայանը, «Ալիք Մեդիա», «Սիվիլնեթ», «Ինֆոքոմ», «Factor TV» լրատվական հարթակները։

Բնապահպանական խնդիրներին բովանդակային առումով և հետևողականորեն անդրադարձող հիմնական լրատվամիջոցը թերևս «Էկոլուր» բնապահպանական լրատվական կայքն է, որն ունի ինչպես թեմատիկ շրջանակ, այնպես էլ հագեցած ֆիլմադարան։ Գերազանցապես բնապահպանական թեմատիկ ուղղվածություն ունի նաև «Էկոնյուզ» լրատվական հարթակը, սակայն անհամեմատ ավելի նեղ համատեքստ ունեցող խնդիրների լուսաբանմամբ։

Ինչպես նշում են հետազոտությանը մասնակցած լրատվամիջոցների ներկայացուցիչները, ինչ-որ մի ժամանակահատված բնապահպանական թեմատիկան ինտենսիվորեն լուսաբանելու պատճառը կարող է լինել, օրինակ, դրամաշնորհային ծրագրի շրջանակում ծրագրային պարտավորությունը։ Դա ունի դրական կողմեր, քանի որ կոնկրետ ոլորտային հարցեր, ինչպիսիք են հանքարդյունաբերական հիմնախնդիրները, կանաչ տնտեսությանը կամ փոքր հիդրոէլեկտրակայանների առաջացրած բնապահպանական

հետևանքները, ենթարկվում են խոր վերլուծության։ Սրա բացասական դրսևորումներից է այն, որ ծրագրի ավարտից հետո չի ցուցաբերվում հետևողականություն, և ուսումնասիրված խորքային խնդիրները կտրուկ անհետանում են լրատվական դաշտից։

Հաճախ բնապահպանական խնդիրներ ներկայացնող նյութի թիրախը քաղաքական երանգ ունեցող կամ կոռուպցիոն հարցերն են, որտեղ բնապահպանությունը միայն ուղեկցող դերակատարում ունի. օրինակ՝ այս կամ այն պաշտոնյայի հետ փոխկապակցված ձկնաբուծարանի, հանքավայրի կամ հիդրոէլեկտրակայանի առաջացրած բնապահպանական խնդիրները՝ կենտրոնում ունենալով կոռուպցիոն ռիսկի լուսաբանման առաջնահերթությունը և ոչ թե բուն բնապահպանական հիմնախնդիրը։ Կոռուպցիոն հիմնախնդիրները բնապահպանական հետևանքների հետ փոխկապակցելն ինքնին բացասական երևույթ չէ, սակայն նյութի բովանդակությունը չի կարելի համարել բնապահպանական, քանի որ բնապահպանությանն առնչվող բովանդակային հարցերը, որպես կանոն, ներկայացվում են բավականին հպանցիկ. բավարար չափով չեն բացահայտվում բուն բնապահպանական խնդրի էությունը և մանրամասները։

Մեկ այլ կարևոր հարց է հայկական մամուլի՝ գլոբալ համատեքստից դուրս մնալը։ Մասնավորապես՝ չափազանց քիչ են Հայաստանից դուրս տեղի ունեցող բնապահպանական հիմնախնդիրների լուսաբանումները, անգամ եթե դրանք ունեն այնպիսի գլոբալ նշանակություն, ինչպիսիք են կլիմայական խնդիրներով պայմանավորված մարտահրավերները և դրանց հաղթահարման տեխնոլոգիաները։ Չկան նյութեր, որոնք կներկայացնեն համաշխարհային խնդիր դարձած սակավաջրության և անապատացման դրսևորումները և դրանց գլոբալ սոցիալական և տնտեսական հետևանքները, ինչպես նաև Հայաստանում նույնանման խնդիրների առկայությունը կամ անխուսափելիությունը։ Չափազանց քիչ և հնացած են անգամ նյութերը հարևան երկրի՝ Թուրքիայի կողմից իրականացվող համատարած ջրամբարաշինության վերաբերյալ, այդ թվում՝ մեր երկրի սահմաններին, որն արդեն իսկ ազդում է Արաքս գետի ջրի քանակի վրա և Հայաստանում առաջացրել է ոռոգման լուրջ խնդիրներ։ Չկան նյութեր կլիմայի փոփոխության և անբարենպաստ միջավայրի պատճառով էկոլոգիական միգրացիայի մասին, որը սպառնում է նաև Հայաստանին, եթե շատ կարճ ժամանակահատվածում չձեռնարկվեն ֆունդամենտալ քայլեր կլիմայի փոփոխության հետևանքների հարմարվողականության և մեղմացման ուղղությամբ։

Մամուլում բնապահպանական հիմնախնդիրները հիմնականում մատուցվում են բավականին նեղ շրջանակում։ Որևէ էկոլոգիական

աղետի, հեղեղման կամ անոմալ տապի մասին լուր ներկայացնելիս, որպես կանոն, նշվում են միայն առկա հետևանքները, որոնք չեն փոխկապակցվում առավել գլոբալ օրակարգերի՝ կլիմայական նոր իրողությունների, անվերահսկելի ուրբանիզացման, կենսաբազմազանության շարունակական կրճատման հետ: Անգամ կորոնավիրուսի համավարակից հետո չկան վերլուծություններ, որոնք կխոսեն կլիմայի փոփոխությամբ պայմանավորված համավարակային ռիսկերի և գլոբալ օրակարգի մաս կազմող այլ մարտահրավերների մասին: Եվ սա այն դեպքում, երբ մեր երկիրը աշխարհում ամենախոցելիներից մեկն է կլիմայական մարտահրավերների նկատմամբ, և որ դրա հետևանքներն արդեն իսկ ամենասուր կերպով դրսևորվում են մեր առօրյայում (գետերի ցամաքում, Սևանա լճի էվտրոֆիկացիա, այդ թվում՝ ջրի ջերմաստիճանի տաքացման հետևանքով, բնական աղետների և հրդեհների անկանխատեսելիություն, եղանակային անոմալիաներ՝ սաստիկ ցուրտ կամ սաստիկ ու տևական շոգ և այլն): Այս բոլոր խնդիրները հիմնավոր ներկայացված են կլիմայի փոփոխության հարցերով զբաղվող գիտնականների վերլուծություններում[22], միջազգային հեղինակավոր մամուլի հրապարակումներում[23], որոնք գոնե կարելի է թարգմանել ու հասանելի դարձնել Հայաստանի բնակչությանը:

Ամփոփելով մամուլի և բնապահպանական հիմնախնդիրների լուսաբանման ընդհանուր նկարագրությունը՝ հարկ է նշել, որ վստահելի մեդիա ունենալու համար չափազանց կարևոր է պրոֆեսիոնալ, պատասխանատու լրագրության մշակույթի ստեղծումը: Իր հերթին՝ մամուլում բնապահպանական հիմնախնդիրների բազմազանությունը, վերլուծական և մասնագիտական նյութերի առկայությունը շատ կարևոր են ինչպես հանրության, այնպես էլ գործարար հատվածի, պետական պաշտոնյաների որակական փոխակերպման համար: Աշխարհում սրընթաց թափ ստացող միտումները, որոնք հանածո վառելիքի հաշվին գոյատևող՝ սպառողական տնտեսությունից կտրուկ անցում են կատարում դեպի էներգախնայող, մաքուր սոցիալական և տնտեսական հարաբերություններ, Հայաստանի համար ունեն նաև երկարաժամկետ քաղաքական կարևորություն:

22 Carnegie Endowment for International Peace, “Economic Development in an Era of Climate Change”, Laurence Chandy, January 2023, https://carnegieendowment.org/2023/01/04/economic-development-in-era-of-climate-change-pub-88690.

23 The Economics, “See what three degrees of global warming look like”, https://www.youtube.com/watch?v=uynhvHZUOOo&t=850s.

Լուսանկարը՝ Անի Սարգսյանի, «Հետք»

Մարզային լրատվամիջոցներին բնորոշ հիմնախնդիրները

Վերը թվարկված հիմնախնդիրներն էլ ավելի սուր դրսևորումներ են ստանում մարզային մամուլում: Դրա պատճառները բազմաթիվ են, որոնց շուրջ արդեն իսկ արվել են որոշակի հետազոտություններ: Նյութական և մարդկային ռեսուրսների պակասը, տեղական համատեքստը և լոկալ առաջնահերթությունները շատ ավելի փոքր միջանցք են թողնում բնապահպանական հիմնախնդիրների լուսաբանման համար՝ առավել ևս գլոբալ օրակարգերը ներկայացնելու տեսանկյունից: Բնապահպանությունը մարզային լրատվամիջոցներում էական տեղ է զբաղեցնում հիմնականում այն դեպքում, երբ հանքարդյունաբերական կամ այլ արտադրական աղտոտման հետևանքով առաջանում են սոցիալական խնդիրներ:

Մամուլի ուսումնասիրությամբ զբաղվող կազմակերպություններից Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեն մշտադիտարկում[24] է իրականացրել մարզային լրատվամիջոցների շրջանում: Թեև նշված մշտադիտարկումն արվել է դեռևս 2009 թվականին, սակայն դրանում տեղ գտած խնդիրները գրեթե նույնությամբ արդիական են նաև այսօր: Ընդ որում՝ այս տեղեկությունը կարևոր է ժամանակային կտրվածքով արձանագրված առաջընթացը և խնդիրների արդիականությունը դիտարկելու տեսանկյունից: Այսպես, առանձնացված հրատապ խնդիրներից են լուսաբանման անհամարժեքությունը և ոչ ամբողջականությունը, թողարկվող նյութի անբավարար օպերատիվությունը և ուշացած մատուցումը: Մյուս կողմից՝ մամուլին բնորոշ ընդհանուր բացասական երևույթներից մարզային մամուլում հատկապես սուր են դրսևորված նյութի հավաստիությունը և ոչ օբյեկտիվ լուսաբանումը: Միևնույն ժամանակ դիտարկվել է հրապարակումների մատուցման որակը, այդ թվում՝ նյութի մակերեսայնությունը, ոչ մասնագիտական տերմինաբանությունը, երբեմն էլ՝ մատուցման լեզուն և տարրական գրագիտության պակասը: Հրապարակումների թեմատիկ ընդգրկումը և սահմանափակ համատեքստը նույնպես առանցքային թերություններից են եղել:

Վերը նշված ուսումնասիրության ընթացքում մարզային լրատվա-

24 «Մարզային լրատվամիջոցներ. իրավիճակ, խնդիրներ, ակնկալիքներ», Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե, 2006-2009 թվականների եռամյա մշտադիտարկման արդյունքներ, http://khosq.am/wp-content/uploads/2012/06/monitor-2006-2009.pdf:

միջոցների համար արվել է հետևություն առ այն, որ հարկ է որոնել տեղեկատվության նոր աղբյուրներ, լինել առավել օպերատիվ՝ լուրի արդիականությունը չկորցնելու համար, ինչը մինչ օրս խնդրահարույց է մարզային լրատվամիջոցներից շատերի համար: Բացի այդ՝ էական խնդիր են դիտարկվել նաև տեղեկության հավաստիությունը և ճշգրտման անհրաժեշտությունը: Ընդ որում՝ խնդիր է ոչ միայն տեղեկության համապատասխանությունը իրականությանը, աղբյուրների առկայությունը[25], այլև ավելի տարրական՝ անձնանունների, տեղանունների և այլ փաստերի ճշգրտման անհրաժեշտությունը:

Այս առումով, սույն հետազոտության շրջանակում Դոյչե Վելլե Ակադեմիայի գործընկեր լրատվամիջոցների և այլ կազմակերպությունների կայքերի ուսումնասիրությունից երևում է, որ վերը թվարկված հիմնախնդիրները մեծ մասամբ արդիական են նաև այսօր, ինչը վկայում է, որ ժամանակի ընթացքում դրական դինամիկան եղել է շատ քիչ կամ բացակայել է: Փոխարենը կներկայացվեն արձանագրված խնդիրները, որոնք կարող են ընթերցողի մեջ ձևավորել տրամաբանական կարծիք առկա իրավիճակի և փոփոխությունների դինամիկայի վերաբերյալ:

Ուսումնասիրված մարզային լրատվամիջոցներից անխտիր բոլորի կայքերում բացակայում է բնապահպանության բաժինը: Բնապահպանական հիմնահարցերը ևս լուսաբանված են բավականին քիչ և հպանցիկ՝ հիմնականում նյութի առանցքում ունենալով ոչ թե բուն բնապահպանական խնդիրը, այլ սոցիալ-տնտեսական և այլ հիմնախնդիրներ: Կան եզակի մուլտիմեդիա հոդվածներ, որոնք բավականին ամբողջական բացահայտում են հարցի բուն բնապահպանական բովանդակությունը, ինչպիսին է, օրինակ՝ Արարատյան արտեզյան ավազանի հիմնախնդիրը[26]: Որոշ նյութերում ներկայացված են հանքարդյունաբերական վիճահարույց նախագծերի վերաբերյալ մասնագիտական դիտարկումներ[27]:

Դիտարկված կազմակերպություններից «Գորիս մամուլի ակումբը» տեղեկությունը մատուցում է կայքի և սոցիալական ցանցերի միջոցով: Հոդվածները թարմացվում են որոշակի պարբերականութ-

25 Տե՛ս «Սոցիալական մեդիան տեղեկատվության աղբյուր հայաստանյան լրատվամիջոցների համար. ձևավորվող ստանդարտներ և կիրառվող պրակտիկա», էջ 30, https://www.osce.org/files/f/documents/2/e/124788.pdf:

26 «Արտեզյան ավազանը անհետանում է», 2018 թ., ԱԼՏ հեռուստաընկերություն, https://multimedia.alttv.am/page28095678.html:

27 «Շրջադարձ Ամուլսարի հարցում», Գյումրու «Ասպարեզ» լրագրողների ակումբ, https://asparez.am/amulsar-harc-hy/:

յամբ։ Հրապարակված նյութերում բնապահպանությունը բավականին քիչ է ներկայացված։

«Գյումրու առաջընթաց»-ն ունի կայք, որը պարբերաբար թարմացվում է։ Այն հասարակական կազմակերպություն է, որի նպատակը հանրային իրազեկումն ու վերահսկողությունն են հանուն ժողովրդավարության զարգացման և քաղաքացիական հասարակության կայացման։ Այստեղ ևս բնապահպանական հիմնախնդիրներն ակնհայտորեն առաջնահերթություն չեն։

«Տավուշ մեդիա» լրատվական հարթակը բավականին հաճախ է թարմացնում կայքի լրահոսը։ Սովորաբար օրվա ընթացքում ներկայացվում են մի քանի ռեպորտաժներ և հոդվածներ։ Կայքում կա առանձին տեսադարան, որտեղ ներկայացված է տեղեկատվական պաստառներ բնական աղետների՝ սողանքի, երկրաշարժի և դրանցից պաշտպանվելու միջոցների վերաբերյալ։ Կայքում կա նաև թեմատիկ հարցազրույցների և քննարկումների առանձին բաժին, որտեղ ներկայացված են նաև Տավուշի մարզում կլիմայի փոփոխության ազդեցությունների վերաբերյալ բովանդակային երկու նյութ[28]։ Բնապահպանության թեման հիմնականում ներկայացված է ընդհանուր լրահոսի շրջանակում՝ քաղաքային այգու, էկոմիջանցքի հիմնման, ինչպես նաև ազգային պարկում հրդեհի, ծառահատումների մասին ռեպորտաժներով։

Ուսումնասիրված մարզային լրատվամիջոցներից «Ցայգ» հեռուստաընկերությունը նույնպես ունի մշտապես թարմացվող և բազմակողմանի բովանդակություն։ Կայքում առանձին բաժիններով ներկայացված են սոցիալական, կրթական, մշակութային, գյուղատնտեսական, առողջապահական, հոգևոր, մարզական իրադարձությունները, սակայն բացակայում է բնապահպանության ենթաբաժինը։ Բնապահպանական և կլիմայական հարցերը հիմնականում ներկայացված են ընդհանրական լրատվությամբ՝ առանց վերլուծական բովանդակության, և հեռուստաընկերության լրահոսում մեծ տեղ չեն զբաղեցնում։

Գյումրու «Ասպարեզ» լրագրողների ակումբի կայքում ևս հրապարակվում են բազմազան և հաճախակի թարմացվող տեղեկություններ։ Հրապարակվող նյութը մեծ մասամբ վերաբերում է Գյումրի քաղաքի և Շիրակի մարզի սոցիալական, քաղաքական և այլ անցուդարձին։ Մեծ տեղ են զբաղեցնում աշխատանքային իրա-

28 «Կլիմայի փոփոխության ազդեցությունը և հետևանքները Տավուշի մարզում», «Տավուշ մեդիա», դեկտեմբերի 10, 2022 թ., https://tavushmedia.am/hy/gyughatntesuthyan-olorteh-tavushi-marzum%e2%80%a4-klor-seghan-khnnarkum-2/։

վունքների, կանանց իրավահավասարության վերաբերյալ հետազոտությունները: Բնապահպանական հիմնահարցերը որոշակի պարբերականությամբ ներկայացված են, այդ թվում՝ բովանդակային և վերլուծական նյութերի տեսքով: Հիմնական թեման հանքարդյունաբերությունն է և պոչամբարների հիմնախնդիրը:

Մարզային լրատվամիջոցներից «Լոռի» հեռուստաընկերության լրահոսում բավականին մեծ տեղ են զբաղեցնում մարզի հանքարդյունաբերական հիմնախնդիրները: Այնուհանդերձ, խնդիրները մեծ մասամբ լուսաբանվում են տեղի բնակչության կողմից հանրային քննարկումները տապալելու, բնապահպանների բողոքի դրսևորումների համատեքստում, ինչպես նաև հանքարդյունաբերական թափոններով գետերն ու շրջակա միջավայրը աղտոտելու մասին լրատվությամբ:

«Համայնքային համախմբման և աջակցման կենտրոն» հասարակական կազմակերպությունը գերազանցապես կենտրոնացած է բնապահպանական և դրա հետ փոխկապակցված սոցիալ-առողջապահական հիմնախնդիրների վրա, որոնց վերաբերյալ տեղեկությունները հրապարակվում են կազմակերպության կայքում, ինչպես նաև «Քաղաքացու ձայնը» մեդիա հարթակում[29]:

Գեղարքունիքի մարզում հեռարձակվող «Գեղամա» հեռուստաընկերության գործունեության վերաբերյալ առցանց տեղեկությունները շատ քիչ են, քանի որ չի գործում վեբկայքը, իսկ համացանցում սուղ տեղեկություններ են հրապարակված:

Գեղարքունիքի մարզում գործող ևս մեկ մարզային լրատվամիջոց է «Քյավառ» հեռուստաընկերությունը[30]: Լրատվամիջոցի կայքէջում ներկայացված են բազմաթիվ թեմատիկ հաղորդումներ, որոնցից ոչ մեկը բնապահպանական ուղղվածություն չունի:

Արմավիրի մարզում հեռարձակվող ALS հեռուստաընկերության կայքէջում նույնպես առանձնացված չէ բնապահպանության ենթաբաժին: Լրահոսում կան որոշակի նյութեր կլիմայական և շրջակա միջավայրի վերաբերյալ հիմնախնդիրների, այդ հարցում Հայաստանի միջազգային պարտավորությունների վերաբերյալ: Բավականին հանգամանալից ուսումնասիրություն է արվել Արարատյան արտեզյան ավազանի վերաբերյալ, կան մարզի գյուղատնտեսական խնդիրներին առնչվող նյութեր, որոնք արծարծում են ջրի սակավության և վատ կառավարման հարցերը:

---

29 «Քաղաքացու ձայնը» մեդիա հարթակ, https://cvmedia.am/link2.php?s=page36&k=:

30 «Քյավառ» հեռուստաընկերություն, http://www.kyavartv.am/:

Ամփոփելով մարզային լրատվամիջոցների ուսումնասիրության արդյունքները՝ կարելի է նշել, որ շատ քիչ հետևություններ կարելի է անել բնապահպանական հարցերի վերաբերյալ բովանդակային նյութի մասին այն պատճառով, որ այդ նյութը բավականին քիչ է: Թվարկված կազմակերպությունների և լրատվամիջոցների ցանկում թերևս միայն «Համայնքների համախմբման և աջակցման կենտրոն» հասարակական կազմակերպության կայքում են բնապահպանական հիմնախնդիրները ներկայացված բավականին լայն շրջանակով՝ ներառելով նաև դրանց հետ փոխկապակցված սոցիալական խնդիրները:

Մարզային մյուս լրատվամիջոցներից որևէ մեկը չունի բնապահպանության վերաբերյալ առանձին բաժին: Ներկայացված նյութերը, տեսագրությունները և հետազոտությունները իրենց թեմատիկ ընդգրկմամբ ևս քիչ են լուսաբանում բնապահպանական հարցեր:

Առաջարկություն 3

Հաշվի առնելով, որ մարզային լրատվամիջոցներն ունեն խիստ սահմանափակ ֆինանսական միջոցներ՝ անհրաժեշտ են աջակցման երկարաժամկետ ծրագրեր, որոնք նրանց թույլ կտան մշակել զարգացման երկարաժամկետ ռազմավարական ծրագրեր:

Առաջարկություն 4

Մարզային լրատվամիջոցների աջակցման ծրագրերում անհրաժեշտ է թիրախային կերպով ամրագրել բնապահպանական հիմնախնդիրների լուսաբանման պարտադիր բաղադրիչ՝ պայմանավորված մարզային առանձնահատկություններով (հանքարդյունաբերական թափոններ, ստորգետնյա ջրային ավազանի գերշահագործում, Սևանա լիճ և այլն):

Բնապահպանական հիմնահարցերի թեմատիկ շրջանակը և առանձնահատկությունները

Ինչպես նշվեց հետազոտության մեթոդաբանության բաժնում, բնապահպանական ոլորտում ակտիվ լրագրողների հետ անցկացվել են հարցազրույցներ, ինչը հնարավորություն է տվել ոչ միայն ճշտելու կայքէջերի առցանց ուսումնասիրության ընթացքում արված հետևությունների հավաստիությունը, այլև խմբագրելու և լրացնելու այդ հետևությունները ստացված լրացուցիչ տեղեկությունների հիման վրա։

Ընդհանրացնելով լրագրողների հետ հարցազրույցի արդյունքները՝ կարելի է անել մի քանի առարկայական ընդհանրացումներ, որոնք վերաբերում են հայաստանյան մամուլում լուսաբանվող բնապահպանական հիմնախնդիրների թեմատիկ շրջանակին, հոդվածների վերլուծական խորությանը և բովանդակային առանձնահատկություններին։

> *«Անշուշտ, բնապահպանական թեմայով մամուլի հրապարակումների ամենամեծ մասը վերաբերում է հանքարդյունաբերությանը, դրա շուրջ հանրային նշանակալի իրադարձություններին և անպատասխանատու կերպով իրականացվող գործունեության բնապահպանական հետևանքներին»։*
>
> ***Քրիստինե Աղալարյան,***
> *հետաքննող լրագրող*

Հանքարդյունաբերության հետ փոխկապակցված խնդիրներից են նաև հանքարդյունաբերական թափոններով շրջակա միջավայրի աղտոտումը, հանրային առողջության և ազդակիր համայնքների տնտեսական գործունեության հետևանքով առաջացող հարցերը և այլն։ Որպես Հայաստանում ամենամեծ բնապահպանական մտահոգություններն առաջացնող հիմնախնդիր՝ այս ոլորտը մատնանշեցին հարցազրույցի հրավիրված անխտիր բոլոր լրագրողները։ Ընդ որում՝ հանքարդյունաբերության խնդիրը լուսաբանվում է մի քանի մակարդակներում. բնապահպանությունից զատ ներկայացվում են ոլորտի իրական շահառուներին, հանքարդյունաբերական ընկերությունների օֆշորային ծագմանը, դրանցում ներգրավված պաշտոնատար անձանց վերաբերող հարցեր։

Բնապահպանության ոլորտի թեմատիկ շրջանակի առումով որպես էական հիմնախնդիր են նշվել նաև Սևանա լճի անբարեխիղճ օգտագործման, Արարատյան արտեզյան ավազանի գերշահագործման, փոքր գետերի վրա կառուցված հիդրոէլեկտրակայանների շահագործման հետևանքով առաջացող բնապահպանական և սոցիալական հարցերը:

> *«Վերջին շրջանում մամուլի ուշադրությանն արժանացող բնապահպանական հիմնահարցերից են նաև պլաստիկ տոպրակների և առհասարակ աղբահանության, վայրի կենդանիների և արագիլների պաշտպանության վերաբերյալ անդրադարձները»:*

Մարի Չաքրյան,
լրագրող, Օրհուսի կոնվենցիայի
Հայաստանի ազգային համակարգող

Հատկանշական է, որ մամուլում բավականին քիչ են կլիմայական հարցերի վերաբերյալ նյութերը: Չնայած նրան, որ Հայաստանը համարվում է կլիմայի փոփոխության նկատմամբ առավել խոցելի երկիր, որտեղ կլիմայական խնդիրներն արդեն շատ հստակ ազդեցություն ունեն ոռոգման հարցերի, ջրային ռեսուրսների կառավարման, բնական աղետների ինտենսիվացման, մարդկանց առողջական վիճակի վրա, կլիման ոչ միայն քիչ, այլև չափազանց մակերեսային է լուսաբանվում. չկան խորքային նյութեր: Կան հեռուստատեսային որոշ նյութեր, բայց դրանք պարբերական բնույթ չունեն:

> *«Մարզային լրատվամիջոցներում առհասարակ շատ քիչ են ինչպես կլիմայական, այնպես էլ բնապահպանական հարցերով լուսաբանումները: Եղած նյութերը իրավիճակային են՝ տաք հետքերով, և ավելի շատ սոցիալական բնույթ ունեն, քան բուն բնապահպանական»:*

Մկրտիչ Կարապետյան,
հետաքննող լրագրող

Բնապահպանության վերաբերյալ մամուլի հրապարակումների բովանդակության առումով ևս ուրվագծվում են հատկանշական առանձնահատկություններ:

«Ինչպես հանքարդյունաբերության, այնպես էլ այլ ոլորտների լուսաբանման ընթացքում մամուլի ուշադրության կենտրոնում են հայտնվում մեծ մասամբ այնպիսի խնդիրներ, որոնց շուրջն աղմուկ է բարձրանում»։

Թեհմինե Ենոքյան,
բնապահպան, լրագրող

Հանրային հնչեղության գործոնը էական նշանակություն ունի նյութի ընթերցվածության տեսանկյունից, ինչը լրագրողներին խթանում է առավել շատ լուսաբանել կոնֆլիկտային իրավիճակները, այդ թվում՝ բնապահպանական համատեքստում։ Դրանք կարող են լինել փոքր ՀԷԿ-երի, հանքարդյունաբերական նախագծերի, ցեմենտի, բիտումի կամ համանման արտադրություն հիմնելու դեմ հանրային դրսևորումներ։ Մշտապես լուսաբանվող հարցերից է տարբեր ազդակիր համայնքներում հանրային քննարկումներին ուղեկցող լարվածությունը։ Հատկապես վերջին շրջանում շատ լայն տարածում ունեցող իրողություն է համայնքների բնակիչների կողմից հանրային քննարկումների տապալումը, որը տեղի բնակչությունը հաճախ ընկալում է որպես հանքարդյունաբերական նախագծի վերաբերյալ իրենց վերաբերմունքն արտահայտելու միակ հասանելի միջոց։ Նշված պրակտիկայի այսօրինակ լայն տարածման պատճառը թերևս այն է, որ համայնքի բնակիչների կարծիքը կամ դիրքորոշումը չունի վճռորոշ նշանակություն հանքարդյունաբերական ծրագրերի պաշտոնական հաստատման տեսանկյունից, ուստի հանրային քննարկումների խափանումը միակ հասանելի միջոցն է իրենց կարծիքն արտահայտելու համար։

Որպես կանոն, բողոքի դրսևորումներն առաջացնում են հանրային լայն արձագանք հասարակական և իրավապաշտպանական շրջանակներում, ինչն իր հերթին նույնպես գրավում է բազմաթիվ լրատվամիջոցների։ Լուսաբանման հիմքում հաճախ ընկած են տարբեր հասարակական կազմակերպությունների կողմից կազմակերպվող միջոցառումները, հրապարակվող հայտարարությունները և կարծիքները։ Որոշ լրագրողներ նշեցին նաև բնապահպանական հարցերի վերաբերյալ պաշտոնական լրահոսը, որոնք մամուլում առավել շատ են հրապարակվում։

Այսպիսով՝ շատ քիչ լրատվամիջոցներ են անդրադառնում բնապահպանական խնդիրների բովանդակային հարցերին՝ բավարարվելով միայն բողոքի ակցիան լուսաբանելով։ Բնապահպանական հարցեր լուսաբանող լրագրողները մատնանշեցին այս առանձնա-

հատկությունը՝ այն դիտարկելով որպես մամուլին բնորոշ բացասական երևույթ, քանի որ վերհանում է բնապահպանական ոլորտում հետաքրքրությունների մակերեսային բնույթը: Անշուշտ, դա պայմանավորված է նաև հանրային պահանջարկով. ինքնին սկանդալային տեսանյութերի շուրջ հետաքրքրությունը սովորաբար ավելի մեծ է, քան հանրային լարվածություն առաջացրած բնապահպանական հիմնախնդրի բովանդակությունը: Առավել շատ դիտումներ ապահովելու համար լրատվամիջոցները լուսաբանման կենտրոնում պահում են գերազանցապես իրարանցում և բախումներ նկարագրող տեսանյութերը, այս կամ այն ընկերության՝ այս կամ այն պաշտոնյայի հետ փոխկապակցվածությունը: Հրապարակվող տեսանյութերում շատ քիչ տեղ է մնում խնդրի բովանդակության և դրա բաղկացուցիչների համար, և որպես կանոն, կատարվող անդրադարձն էլ լինում է բավականին հպանցիկ և մակերեսային:

Այսպիսով՝ անգամ թեմատիկ առումով համեմատաբար առավել շատ լուսաբանվող բնապահպանական հարցերը բովանդակային առումով ներկայացվում են գերազանցապես իրավիճակային լուսաբանման եղանակով: Շատ քիչ լրատվամիջոցներ կան, որոնց հրապարակումներում էական մաս են կազմում խորքային և բուն բնապահպանական հարցերը:

Հարկ է նշել, որ մամուլում երբեմն հրապարակվում են բավականին ամբողջական հետաքննական նյութեր, օրինակ՝ Թեղուտի հանքավայրի և պոչամբարի բնապահպանական ռիսկերի և այդպիսի խնդրահարույց ծրագրի միջազգային ֆինանսավորման **(«Սիվիլնեթ»)**[31], ձկնաբուծության զարգացման համար Արարատյան արտեզյան ավազանի գերշահագործման **(«Հետք»)**[32], անազատության մեջ գտնվող կենդանիների ապրելու պայմանների, վայրի կենդանիների առևտրի **(«Էկոնյուզ»)**[33], հանքարդյունաբերական

31 «Թեղուտ. դանիական խնդրահարույց ներդրումը Հայաստանում», «Սիվիլնեթ», 14 հոկտեմբերի, 2014 թ., https://bit.ly/3F9hmFc:

32 «Արարատյան դաշտի ձկները և ջրի իշխանները», «Հետք», 23 դեկտեմբերի, 2019 թ., https://www.youtube.com/watch?v=79cgQ2Fsez4&t=604s:

33 «Վայրի առևտուր». ֆիլմ վայրի կենդանիների միջազգային առևտրի և Հայաստանի մասին, «Էկոնյուզ», 30 մարտի, 2022 թ., https://econews.am/?p=12073&l=am:

Լուսանկարը՝ Անի Սարգսյանի, «Հետք»

ծրագրերի դեմ դատական հայցերի **(«EVN Report»)**[34] և այլ համանման հարցերի վերաբերյալ։ Բավականին հաջողված հետազոտական նյութեր ունեն **«Ինֆոքոմ»**[35], **«Factor TV»**[36], **«Ալիք Մեդիա»**[37], **«Ազատություն ռադիոկայան»**[38] լրատվամիջոցները։

---

34 «Պետության ձախողումները հանքարդյունաբերության ոլորտում. դասեր Հայաստանի ապագայի համար», «EVN Report», 06 հունիսի, 2018 թ., https://evnreport.com/arm/raw-unfiltered-arm/petuthyan-dzaxoghumnereh-hankhardyunaberuthyan-olortum%e2%80%a4-daser-hayastani-apagayi-hamar/:

35 «Վարդավառյան մանիպուլյացիա. Ամուլսարից՝ Սևան, բնակի՞չ, թե՞ բնապահպան», «Ինֆոքոմ», 23 հուլիսի, 2020 թ., https://infocom.am/hy/article/32325:

36 «Ողջի գետի էկոլոգիական աղետը. բնապահպանները պահանջում են քրեական պատասխանատվության ենթարկել մեղավորներին», «Ֆակտոր ԹիՎի», 17 հոկտեմբերի, 2019 թ., https://factor.am/192440.html:

37 «Քարաբերդում ֆերմեր լինել են ուզում, ոչ թե հանքի աշխատող», «Ալիք Մեդիա», 15 նոյեմբերի, 2022 թ., https://www.aliqmedia.am/2022/11/15/91475/:

38 «ELARD-ի հետ տեսակոնֆերանսի արձագանքները, 31 օգոստոսի, 2019 թ., https://www.azatutyun.am/a/30139617.html:

Բավականին փոքր թիվ են կազմում հայաստանյան այն լրատվամիջոցները, որոնք ունեն բնապահպանության վերաբերյալ ծավալուն բովանդակային նյութ: Ինչպես նշվեց, դրանցից միայն «Էկոլուր» և «Էկոնյուզ» լրատվական հարթակներն են մասնագիտացված կերպով ներկայացնում գերազանցապես բնապահպանական նյութեր, քանի որ այդ թեման նշված լրատվամիջոցների մասնագիտական ուղղվածությունն է: «Էկոլուրի» բովանդակությունը անհամեմատ ավելի լայն է և ընդգրկում է բնապահպանական հիմնախնդիրների գրեթե ամբողջ բազմազանությունը. կայքում առանձնացված են որոշ բաժիններ, որտեղ հրապարակված են հատկապես հանրային մեծ հետաքրքրություն ունեցող նեղ հարցեր, ինչպիսիք են Ամուլսարի, Սևանի, փոքր հիդրոէլեկտրակայանների խնդիրները: Այս լրատվամիջոցն առանձնանում է նաև հանրային ակտիվությամբ և իր գործունեության ընթացքում փորձագիտական մակարդակի հետազոտություններ իրականացնելու պրակտիկայով: Այնուհանդերձ, մեկ լրատվամիջոցի գործունեությունը բավարար չէ բնապահպանական և կլիմայական լայն շրջանակի հիմնախնդիրները համակողմանի և բավարար խորությամբ լուսաբանելու համար:

Որպես ընդհանրական դիրքորոշում կարելի է հետևություն անել,

որ բնապահպանության վերաբերյալ հայաստանյան մամուլի հրապարակումներն իրենց խորության, թեմատիկ բազմազանության, բովանդակային առանձնահատկությունների առումով բավարար չեն, որպեսզի հանրությունն ամբողջական և խորքային տեղեկություններ ստանա շրջակա միջավայրի վիճակի, բնապահպանական ռիսկերի և դրանց հետևանքների վերաբերյալ:

Այնուհանդերձ, հայկական մեդիայի լրահոսում վերլուծական նյութերի առկայությունը դեռևս չի փաստում տվյալ լրատվամիջոցի հետաքրքրությունների շրջանակում բնապահպանական հիմնահարցերի կայուն ներկայացվածության մասին, քանի որ հաճախ դա պայմանավորված է կոնկրետ լրագրողների աշխատանքով, որոնք հաճախ են տեղափոխվում մի լրատվամիջոցից մյուսը: Հաճախ վերլուծական կամ հետաքննական հոդվածների հեղինակները անհատ փորձագետներ են, որոնք պարզապես իրենց աշխատանքը հրապարակում են որևէ լրատվական հարթակի միջոցով: Քիչ չեն դեպքերը, երբ բնապահպանական հիմնախնդիրների վերաբերյալ հետազոտական նյութերը պատրաստվում են միջազգային ծրագրերի միջոցով, ինչը ևս հատվածական է և ժամանակավոր՝ պայմանավորված միջազգային ծրագրի բյուջեով և տևողությամբ:

Հայաստանյան մեդիայում լրագրողների համար բնապահպանական խնդիրները լուսաբանելու ամենանկատելի խոչընդոտներից է նեղ մասնագիտական տեղեկությունների պակասը: Լրագրողներից շատերը նշեցին, որ վերլուծական նյութեր պատրաստելիս հաճախ անհրաժեշտ է լինում երկար քննարկումներ և խորհրդատվություն անցկացնել ոլորտի մասնագետների հետ, որպեսզի լուսաբանվող նյութը լինի հիմնավորված և չարժանանա քննադատության: Լրագրողներից ոմանք անգամ խնդրում են, որ զգայուն հարցերը հրապարակվեն հենց այդ մասնագետների անունից՝ որպես մեջբերում: Վերջին շրջանում քիչ չեն դեպքերը, երբ որևէ հրապարակման համար լրատվամիջոցների դեմ դատական հայցեր են ներկայացվում: Դա ոչ միայն բարդացնում է լրատվամիջոցների աշխատանքը, այլև նրանց ստիպում է շատ ավելի զգուշավոր լինել վիճելի հիմնախնդիրները լուսաբանելիս:

Ամփոփելով կարելի է ասել, որ բնապահպանական խնդիրների լուսաբանման հարցում հայաստանյան մամուլում դիտարկվող առանցքային բացերից է բնապահպանական կրթություն և մասնագիտացում ունեցող լրագրողների պակասը: Սա, թերևս, չափազանց էական ազդեցություն ունի բնապահպանական համատեքստ ունեցող իրադարձությունները նկարագրող հրապարակումների բովանդակության առումով, քանի որ լրագրողները մեծ մասամբ

նախընտրում են ներկայացնել իրենց համար տեսանելի կամ մասնագիտական գիտելիքներ չպահանջող բաղադրիչները։

Լրատվական դաշտում բնապահպանական և հատկապես կլիմայական հարցերը խորքային-վերլուծական մակարդակում ներկայացնելու համար հայկական մամուլին խոչընդոտում է ոչ միայն այդ հարցերում մասնագիտացված լրագրողների պակասը, այլև հնարավորինս մեծաքանակ դիտումներ ապահովելու մոլուցքը։ Ընդունված է համարել, որ երկար, մասնագիտական տեսանյութերն ու տեքստերը չեն ընթերցում և չեն դիտում, ուստի դրանք խրախուսելի չեն։ Հարկ է նշել, սակայն, որ կարճ նյութերը հաճախ կարող են չարտացոլել ամփոփ միտք, որը չափազանց կարևոր է նյութի ամբողջականությունն ապահովելու համար։ Իր հերթին՝ խորքային, մասնագիտական նյութերը երբեմն պահանջում են ավելի բարդ խոսքի կառուցվածք, որոշակի տերմինաբանություն և այլ առանձնահատկություններ, որոնք կարևոր են նյութի ճշգրտության և պրոֆեսիոնալիզմի տեսանկյունից։ Ի վերջո, օտարերկրյա հեղինակավոր մամուլում, անգամ սոցիալական ցանցերում, կան բազմաթիվ նեղ մասնագիտական նյութեր, որոնք ունեն իրենց ընթերցողն ու դիտողը, այդ թվում՝ Հայաստանում։

Առաջարկություն 5

Լրատվամիջոցները պետք է սկսեն վարել որոշակի մասնագիտական թեմատիկ շարքեր՝ կոնկրետ բնապահպանության թեմաները ներկայացնելով գիտական-մասնագիտական խորությամբ։ Գուցե սկզբնական շրջանում դրանք չունենան լայն «սպառում», սակայն դրանց բացակայությունն ինքնին պարզունակ, զարգացման միտումներ չցուցաբերող լրատվական դաշտի ցուցիչ է, ինչը հայկական մամուլի խիստ բացասական դրսևորում է։

Բնապահպանական հարցերի լուսաբանման բարելավման գործիքներ

Հիմք ընդունելով սույն հետազոտության ընթացքում վերհանված խնդիրներն ու առանձնահատկությունները՝ հետազոտության այս բաժնում կներկայացվեն որոշ գործիքներ և անհրաժեշտ միջոցառումներ, որոնք կարող են որոշակիորեն բարելավել բնապահպանական հիմնահարցերի լուսաբանման որակը, լրացնել հայկական մամուլում առկա բացերը և առավել արդյունավետ դերակատարում ունենալ հանրային պատշաճ իրազեկման հարցում և որոշումների ընդունման ժամանակ ազդել պետական մարմինների դիրքորոշումների վրա: Անշուշտ, նշված առաջարկությունները կամ տեսակետները չեն հավակնում լինելու սպառիչ կամ միանշանակորեն անհրաժեշտ: Այնուհանդերձ, այդ տեսակետները կարող են կողմնորոշիչ լինել մեդիայի ոլորտում փորձագիտական ներուժ ունեցող անձանց և կազմակերպությունների համար՝ բնապահպանական հարցերն առավել պրոֆեսիոնալ լուսաբանելու նպատակով հիմնավորված գործիքակազմ մշակելու համար:

Հարկ է ընդգծել նաև, որ ներկայացվող տեսակետները վերաբերում են գերազանցապես բնապահպանական հիմնախնդիրների լուսաբանման առանձնահատկություններին, թեև կարող են դիտարկվել նաև այլ ոլորտների համար՝ հաշվի առնելով հայաստանյան մամուլում դրսևորվող խնդիրների ընդհանրությունները: Առաջարկությունների շրջանակը կարող է որպես այլընտրանքային կարծիք դիտարկվել մեդիա դաշտի զարգացման հարցերով հետաքրքրված միջազգային կազմակերպությունների, հիմնադրամների համար՝ կողմնորոշվելու, թե որ ուղղություններով կարելի է ջանքեր գործադրել:

Հետազոտության արդյունքներն ամփոփելով՝ ստորև ներկայացված առաջարկությունները և հուշումները կարող են նպաստել ինչպես լրատվական դաշտին բնորոշ ընդհանրական խնդիրների կանոնակարգմանը, այնպես էլ բնապահպանական և կլիմայական հիմնախնդիրների թիրախային ու որակյալ ներկայացմանը:

Առաջարկություն 1

Լրագրողների ինքնակազմակերպման որևէ կառույցի շրջանակում մշակել Հայաստանում գործող բոլոր լրատվամիջոցների և լրագրողների համար համընդհանուր ճանաչում ունեցող էթիկական նորմեր, որոնց պետք է հետևեն հայաստանյան մեդիայում գործող բոլոր լրատվամիջոցները և լրագրողները։

Առաջարկություն 2

Լրագրողական էթիկայի և պրոֆեսիոնալ ժուռնալիզմի թեմայով կազմակերպել միջազգային համաժողով՝ հրավիրելով աշխարհում հեղինակավոր լրատվամիջոցների և լրագրողական միությունների ներկայացուցիչների։

Առաջարկություն 3

Հաշվի առնելով, որ մարզային լրատվամիջոցներն ունեն խիստ սահմանափակ ֆինանսական միջոցներ՝ անհրաժեշտ են աջակցման երկարաժամկետ ծրագրեր, որոնք լրատվամիջոցներին թույլ կտան մշակել զարգացման երկարաժամկետ ռազմավարական ծրագրեր։

Առաջարկություն 4

Մարզային լրատվամիջոցների աջակցման ծրագրերում անհրաժեշտ է թիրախային կերպով ամրագրել բնապահպանական հիմնախնդիրների լուսաբանման պարտադիր բաղադրիչ՝ պայմանավորված մարզային առանձնահատկություններով (հանքարդյունաբերական թափոններ, ստորգետնյա ջրային ավազանի գերշահագործում, Սևանա լիճ և այլն)։

Առաջարկություն 5

Լրատվամիջոցները պետք է սկսեն վարել որոշակի մասնագիտական շարքեր՝ կոնկրետ բնապահպանության թեմաները ներկայացնելով գիտական-մասնագիտական խորությամբ։ Գուցե սկզբնական շրջանում դրանք չունենան լայն «սպառում», սակայն դրանց բացակայությունն ինքնին պարզունակ, զարգացման միտումներ չցուցաբերող լրատվական դաշտի ցուցիչ է, ինչը հայկական մամուլի խիստ բացասական դրսևորում է։

Լուսանկարը՝ Անի Սարգսյանի, «Հետք»

Հուշում 1

Հետազոտության արդյունքներով վերհանված խնդիրներից մեկը գլոբալ բնապահպանական համատեքստից կտրված լինելն է, ինչը հատկապես առարկայական է կլիմայի փոփոխության հարցերի վերաբերյալ համարժեք գնահատական ձևավորելու առումով: Միջազգային մամուլում կլիմայական հարցերի վերաբերյալ կան բավականին ծավալուն և մասնագիտական նյութեր՝ ինչպես գիտական հոդվածների, այնպես էլ տեսանյութերի ձևով: Դրանք հաճախ մատուցվում են ոչ մասնագիտական լսարանի համար շատ մատչելի և պարզորոշ՝ գրաֆիկական լուծումների, վավերագրական տեսանյութերի, գիտնականներից վերցված մեկնաբանությունների կադրեր օգտագործելու եղանակներով, ինչը բարձրացնում է մատուցվող նյութի նկատմամբ վստահությունը և հեշտացնում բովանդակության ընկալումը: Փոխարենը, տեսանելի ապագայում քիչ հավանական է, որ հայկական մամուլում ստեղծվեն դրանց համարժեք բովանդակությամբ նյութեր: Հետևապես, կարելի է միջազգային մամուլում առկա արժեքավոր հոդվածներն ու տեսանյութերը պարզապես թարգմանել հայերեն և մատուցել Հայաստանի հասարակությանը՝ բնականաբար պահպանելով սկզբնական նյութի հեղինակային իրավունքները: Դա կարող է արվել ինչպես առանձին լրատվամիջոց հիմնելով, այնպես էլ տարբեր լրատվամիջոցների կայքերում առանձին ենթաբաժին ստեղծելով:

Հուշում 2

Հայաստանի լրատվական դաշտի զարգացումը խթանող միջազգային կազմակերպությունները, որոնք հետաքրքրված են բնապահպանական և կլիմայական հիմնահարցերի որակյալ լուսաբանմամբ, լրագրողների և բարձր կուրսերի ուսանողների համար կարող են նախաձեռնել բնապահպանական կրթության դասընթացների շարք՝ համագործակցելով ակադեմիական ինստիտուտների և համալսարանների հետ: Դասընթացներին կարող են ներգրավվել օտարերկրյա հեղինակավոր ինստիտուտների դասախոսներ, կլիմայի փոփոխության հարցերով զբաղվող գիտնականներ և ոլորտում մասնագիտացած լրագրողներ:

Հուշում 3

Բնապահպանության ոլորտի մասնագետներին, այդ թվում՝ բարձր կուրսերի մոտիվացված ուսանողներին, գործուղել կլիմայական և բնապահպանական այլ հարցերով մասնագիտացած օտարերկրյա ինստիտուտներ (ուսումնական հաստատություններ, գիտահետազոտական ինստիտուտներ և այլն)՝ մասնագիտական վերապատրաստում անցնելու համար: Միևնույն ժամանակ պարտադիր պայման սահմանել, որ նրանք որոշակի պարբերականությամբ որակյալ հոդվածներ հրապարակեն հայկական լրատվամիջոցներում: Ընդ որում՝ լրատվամիջոցներին ցանկալի է նախապես ընտրել՝ նրանց հետ համագործակցության հուշագիր կամ համանման այլ փաստաթուղթ ստորագրելու նպատակով: Այս մոտեցումը կարող է կայուն և բազմակողմանի աշխատանքային հարաբերություններ ձևավորել գործուղվող մասնագետների, նրանց ընդունող ինստիտուտների և լրատվամիջոցների համար, եթե այս գործընթացը համակարգվի ֆինանսավորող կազմակերպությունների կողմից: Այսօրինակ կրթական գործընթացները կարող են նաև համաֆինանսավորվել «Էրազմուս» և այլ կրթական ծրագրերի կողմից:

Օգտագործված նյութեր և հղումներ

Հղումներ օրենսդրական կարգավորումներին և կանոնակարգերին

1. «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքը, https://bit.ly/3YXB5PF:
2. Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագիր, https://bit.ly/3YCnzBd:
3. Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագիրը ստորագրած ԶԼՄ-ների ցանկ, https://bit.ly/40TTeQ9:
4. «Զանգվածային լրատվության միջոցների ինքնակարգավորման համակարգի ինստիտուցիոնալ կայացումը», նախագիծ, https://bit.ly/3EbFJBF:
5. «Մեդիա նախաձեռնությունների կենտրոն» հասարակական կազմակերպության կանոնադրություն, https://bit.ly/3I4IXYE:

Զեկույցներ և ուսումնասիրություններ

6. Արմեն Ավետիսյան, Համացանցային լրատվական կայքերի ձևավորումը Հայաստանում, «Ժուռնալիստիկա և հաղորդակցություն», Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2018 թ., http://ysu.am/files/A_Avetisyan_51-60.pdf:
7. «Մարզային լրատվամիջոցներ. իրավիճակ, խնդիրներ, ակնկալիքներ», Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե, մշտադիտարկման զեկույց, https://bit.ly/3YAAZxw:
8. The Varna Guidance and Recommendations on Police-Media Relations, http://www.aip-bg.org/documents/varna.htm.
9. Council of Europe Committee of Ministers Recommendation CM/Rec(1996) 4 on the protection of journalists in situation of conflict and tension, https://bit.ly/3YTmowP.
10. World Resources Institute, National Water Stress Ranking http://bit.ly/3YCnFbT.
11. «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիա. ՀՀ հինգերորդ ազգային զեկույց, https://bit.ly/3KbY05F:
12. «Խտրականությունն ու բռնությունը հեռուստաեթերում և լրատվական կայքերում. որքանով է գենդերային զգայուն հայաստանյան մեդիան». մշտադիտարկման արդյունքների

ամփոփում, 2019 թ., Media-Monitoring-Report_Final.pdf (oxygen.org.am):

13. «Սոցիալական մեդիան տեղեկատվության աղբյուր հայաստանյան լրատվամիջոցների համար. ձևավորվող ստանդարտներ և կիրառվող պրակտիկա», https://www.osce.org/files/f/documents/2/e/124788.pdf:
14. Մեդիա աշխատողների կարիքները տեղեկություններ ստուգելիս և ապատեղեկատվության հետ աշխատելիս», 2022 թ., https://bit.ly/3jZk1tM:
15. «Մեդիա հանդուրժողականության ինդեքսը իրավապաշտ-պանների և ակտիվիստների հանդեպ», «Սոցիոսկոպ» ՀԿ, Եր., 2015 թ., https://socioscope.am/wp-content/uploads/2016/02/Tolerance-Index_Report_21.02.16_final.pdf:
16. «Լրագրողական էթիկա. օրինակներ և մեկնաբանություններ», խմբ.՝ Նարինե Սաֆարյան, «Ինտերնյուս» մամուլի աջակցության ՀԿ, Ե., 2012:
17. «Լավագույնը ցանցում. առցանց լրագրողի ուղեցույց», խմբ.՝ Սուրեն Դեհերյան, Եր., 2013 թ., https://www.osce.org/files/f/documents/2/b/109869.pdf:
18. Գերմանական մամուլի կոդեքս, https://issuu.com/jffarmenia/docs/german_press_code:

Համառոտագրություն

Հետազոտությունն իրականացվել է հայաստանյան լրատվամիջոցների կողմից բնապահպանական հարցերի լուսաբանման մակարդակը գնահատելու համար: Ուսումնասիրվել են ինչպես լայն լսարան ունեցող լրատվամիջոցների, այնպես էլ մի շարք մարզային լրատվամիջոցների լրահոսի բովանդակությունը, վերջիններիս կայքերի կառուցվածքում բնապահպանության կամ շրջակա միջավայրի ենթաբաժնի առկայությունը, ներկայացվող բնապահպանական նյութի բնույթն ու մասնագիտական խորությունը և այլ առանձնահատկություններ:

Հետազոտությունն իրականացնելիս օգտագործվել են տեղեկության հավաքման առաջնային և երկրորդային աղբյուրներ, ինչպիսիք են մամուլի հրապարակումները, տեղական և միջազգային կազմակերպությունների զեկույցներն ու հետազոտությունները, ստացված տեղեկությունը ստուգվել է բնապահպանական ոլորտներում զգալի փորձառություն ունեցող լրագրողների շրջանում հարցազրույցների միջոցով: Նշված գործողությունների միջոցով ձեռք են բերվել տվյալներ առ այն, թե բնապահպանական որ հիմնախնդիրներն են առավել շատ լուսաբանվում, որքանով են կարևորվում կլիմայական հարցերը: Հնարավոր է եղել առանձնացնել այն լրատվամիջոցների ցանկը, որոնք առավել շատ են ներկայացնում բնապահպանական հիմնախնդիրները: Գնահատվել է դրանց հրապարակումների բնույթը՝ զուտ լրատվակա՞ն, թե՞ նաև մասնագիտական-վերլուծական: Արվել են հետևություններ, թե բնապահպանական հարցերին անդրադարձող հրապարակումներում որքանով է բուն բնապահպանական թեման շոշափվում, քանի որ այդօրինակ նյութերի զգալի մասը վերաբերում է այլ հիմնախնդիրներին՝ կոռուպցիոն բնույթի բացահայտումներ,
հանրային

Լուսանկարը՝ Անի Սարգսյանի, «Հետք»

բողոքի դրսևորումներ, հասարակական կազմակերպությունների հայտարարություններ և այլ նմանօրինակ լրահոս, որը միայն ընդհանուր եզրերով է անդրադառնում բնապահպանական հիմնախնդրի բովանդակությանը։

Հետազոտության ընթացքում կատարվել են բավականին մտահոգիչ հետևություններ հայաստանյան լրատվամիջոցների կողմից բնապահպանական հիմնահարցերի լուսաբանման որակի վերաբերյալ։ Շատ փոքր թիվ են կազմում կլիմայի փոփոխությունների, Հայաստանի վրա դրա բազմակողմանի և խոր ազդեցության վերաբերյալ հրապարակումները։ Լրահոսը գերազանցապես վերաբերում է բնապահպանական խնդիրներով պայմանավորված սոցիալական, քաղաքական, կոռուպցիոն կամ սկանդալային ենթատեքստ ունեցող դրսևորումներին։ Բացառություն են մի քանի լրատվամիջոցներ, որոնց լրահոսը հենց բնապահպանական ուղղվածություն ունի։ Հատկապես խնդրահարույց են մարզային լրատվամիջոցներում բնապահպանական լրատվության որակը և անգամ իրենց մարզին բնորոշ բնապահպանական առանձնահատուկ խնդիրների լուսաբանման մակարդակը։

Հետազոտության վերջում ներկայացված են վերհանված հիմնախնդիրներից բխող առաջարկություններ, որոնք կարող են բարելավել բնապահպանական լրատվության որակը։

Abstract

The purpose of the study was to evaluate the extent to which environmental issues are covered by the Armenian media. The study analyzed the content of news feeds of both widely-read media outlets and regional media, taking into account the presence of an environmental protection or environment sub-section on their websites, the depth and professionalism of their environmental coverage, and other specifics.

The research utilized primary and secondary sources of information, such as press releases, reports, and studies conducted by local and international organizations. The information was also verified through interviews with prominent environmental journalists. The study aimed at identifying which environmental issues are covered the most and to what extent climate change is addressed.

The study identified a list of media outlets that frequently cover environmental issues, and assessed the nature of their coverage, including whether their content was purely news-based or included professional analysis. It also examined how much of the coverage was solely dedicated to environmental issues, as many environmental stories also touch on other topics such as corruption, protests, or NGO statements.

Unfortunately, the study's findings suggest that the quality of environmental coverage by Armenian media is concerning. The number of stories covering the impact of climate change on Armenia is quite low, and the news mainly focuses on social or political contexts that arise from environmental problems. The study identified a few media outlets whose coverage is environmental in nature, but the quality of environmental coverage by regional media outlets is particularly problematic.

As a result of the study, recommendations were made to improve the quality of environmental news coverage in Armenian media.

During this era of tectonic climate change, it is crucial for the media to fulfill its key mission of delivering dependable and high-quality information regarding environmental issues to the public. This objective can be achieved by prioritizing environmental educational opportunities and training courses for journalists, as well as translating and publishing professional materials from international sources in Armenian media. In addition, journalistic circles should also focus on addressing the prevalent issues within Armenian media, such as journalistic ethics, impartiality, and responsibility.

Research on the Coverage of Environmental Issues in Armenian Media/ Artur Grigoryan, Environmental Law Specialist - Yerevan 2023

Imprint
Deutsche Welle
53110 Bonn
Germany

RESPONSIBLE
Carsten von Nahmen

AUTHOR
Artur Grigoryan

EDITOR
Anahit Gharibyan

DESIGNER
Tatev Yesayan

PROOFREADING
Azniv Naslyan

PHOTOGRAPHER
© Ani Sargsyan / Hetq

RESEARCH COORDINATION
Satenik Baghdasaryan, Sven Skoric, Diana Shahbazyan

© – 2023 – Artur Grigoryan. All rights reserved.
Licensed to the European Union under conditions.

The “European Media Facility in Armenia – Building Sustainable and Professional Media” project is being implemented by DW Akademie in cooperation with BBC Media Action, Democracy Development Foundation, Hetq/ Investigative Journalists NGO and Factor TV. The project is funded by the European Union and the Federal Ministry for Economic Cooperation and Development (BMZ).

This publication was funded by the European Union. Its contents are the sole responsibility of the author and do not necessarily reflect the views of DW Akademie and the European Union.

Yerevan

2023